XVII ԴԱՐՈՒՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱԹՈԼԻԿ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա. Վ. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Ուշ միջնադարում պետականությունից զրկված և իր ազգային անկախությունը կորցրած հայ ժողովուրդը գտնվում էր երկու հզոր ասիական բռնապետությունների՝ Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի անագորույն լծի տակ, մշտապես ենթարկվելով ինչպես ազգային-կրոնական դաժան ճնշման ու հալածանքների, այնպես էլ սոցիալ-դասակարգային անողոք շահագործման։ Որպես այդ քաղաքականության անխուսափելի հետևանք տեղի էր ունենում հայրենիքի տարածքում հայերի համախմբման ու կենտրոնացման պայմանների խաթարում։ Այդ ամենը վտանգի տակ էր դնում ինչպես նրանց ազգային, մշակութային ու կրոնական ինքնուրույնությունը, այնպես էլ ֆիզիկական գոյությունը։

XVII դարում թե՛ արևմտահայության և թե՛ արևելահայության վրա կախվեց նաև մեկ այլ մահացու վտանգ։ Կաթոլիկ միսիոներների ծավալած դավանափոխական աննախընթաց լայն գործունեության ու հարաճուն գրոհի և Հայաստանում ծավալված այսպես կոչված միարարական կամ ունիթորական շարժման հետևանքով տեղի էր ունենում ոչ միայն հայ ժողովրդի կենսական ուժերի տրոհում ու անդամալուծում, բնակչության տարբեր խմբերի պառակտում, դավանափոխություն ու լեզվափոխություն, այլև իր կրոնական-ազգային դիմագիծը կորցնելու, համաձուլվելու, ուծանալու սպառնալիք։ Այլ կերպ ասած, հայության վրա կախված էր ազգային-քաղաքական գոյության կորստի ռեալ վտանգ։

Հանրահայտ իրողություն է, որ կաթոլիկությունը հայության համար պարունակում էր ուղղակի անջատողական նկարագիր և հակված էր հայ ժողովրդին կտրել-անջատել ոչ միայն իր եկեղեցուց ու ավանդույթներից, այլև սեփական ազգությունից։

Կաթոլիկ եկեղեցու սևեռուն ուշադրությունը Արևելյան Հայաստանի նկատմամբ առաջին հերթին պայմանավորված էր նրանով, որ այդ երկրամասի վրայով էին անցնում Արևելքի ու Արևմուտքի միջև միջազգային կարավանային առևտրի ճանապարհները, և նրա քաղաքներից շատերը հանդիսանում էին միջմայրցամաքային առևտրի կարևորագույն հանգույցներ։ Այս իսկ տեսակետից բնավ պատահական չէ, որ միջազգային առևտրի հետ կապված հայ առևտրական դասը ինքնին արդեն նպաստավոր միջավայր էր հանդիսանում միսիոներների համար, որոնք հանգեպ էին գալիս որպես «շուկայի հոգևոր հետախույզներ»[1]։ Բացի այդ, Արևելյան Հայաստանը քրիստոնյա Վրաստանի հետ համատեղ մի կղզի էր շրջակա մահմեդական ծովի մեջ և կարող էր ծառայել որպես անփոխարինելի հենակետ արևմուտքի քրիստոնյա պետությունների հեռու գնացող ռազմաքաղաքական ծրագրերի համար[2]։

Հռոմի կողմից Արևելյան Հայաստան ուղարկվող միսիոներությունը, բացի լատինադավան ժողովուրդների թիվը ավելացնելու նպատակից, որը պետք է փոխհատուցում հանդիսանար Ռեֆորմացիայի հետևանքով Եվրոպայում կաթոլիկ եկեղեցու կրած կորուստների դիմաց[3], նաև խնդիր ուներ հող նախա-

---

[1] *Աշ. Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք 2, Երևան, 1959, էջ 178։*

[2] *Տե՛ս* Jean Richard. La Papaute et les missions d'Orient au moyen ages Rome, 1977, p. 201.

[3] И. Лаврецкий. Ватикан. М., 1957, с. 62.

պատրաստել եվրոպական առևտրական կապիտալի հետագա ներթափանցման համար։ Սրա վերջնական նպատակն էր զավթել ողջ իրանական շուկան և Անդրկովկասն ու Առաջավոր Արևելքն օգտագործել որպես հումքի աղբյուր արագ զարգացող եվրոպական արդյունաբերության համար։ Կաթոլիկ եկեղեցու թիկունքում կանգնած եվրոպական բուրժուազիան մտադիր էր նաև իր շահերին ծառայեցնել հայ առևտրական կապիտալը, հայ վաճառականների միջազգային առևտրական կապերը և խոշոր գաղութները օգտագործել որպես կոմպրադոր իր արևելյան առևտրի զարգացման, ինչպես նաև նրա օգնությամբ Արևելքում իր քաղաքական ազդեցության տարածման համար։

Կաթոլիկ միսիոներների ներթափանցումը Արևելյան Հայաստան սկսվել էր դեռևս XIV դարում և կապված է դոմինիկյան միաբանության կրոնավորների անվան հետ։ Հռոմի պապ Հովհաննես XXII-ի 1318 թ. կոնդակով ստեղծվեց արևելյան գավառների արքեպիսկոպոսություն, որը իր մեջ ընդգրկեց Արևելյան Հայաստանին սահմանամերձ այնպիսի միսիոներական կենտրոններ, ինչպիսիք էին Սուլթանիե, Մարաղա, Թավրիզ քաղաքները[4]։ Այս վայրերից շարժվելով դեպի բուն հայկական տարածքները, կաթոլիկ քարոզիչներին հաջողվեց հաստատվել Նախիջևանի գավառի առևտրաշատ Ջահուկ, Երնջակ և այլ շրջաններում։ Դոմինիկյան կրոնավորներ Բարդուղիմեոս Բոլոնացու, Պետրոս Արագոնացու և այլոց եռանդուն գավանափոխական գործունեության հետևանքով XIV դարի առաջին կեսում նշված շրջաններում երևան եկան հայ լատինադավանների կամ ունիթորների մի շարք համայնքներ[5], որոնք Իննոկենտիոս VI պապի 1356 թ. կոնդակով ձևավորվեցին որպես միարարների առանձին միաբանություն դոմինիկյանների ուխտի գլխավորի անմիջական ենթակայությամբ[6]։

Արդ, XVII դարում, երբ ինչպես ողջ հայ ժողովուրդը, այնպես էլ նրա արևելյան հատվածը ենթարկվեց կաթոլիկական քարոզիչների հարաճուն գրոհին, Արևելյան Հայաստանում արդեն գոյություն ուներ լատինականության ներպարփակ մի կենտրոն։ Եվրոպական արքունիքների քաղաքական ծրագրերում կաթոլիկության այդ կղզուն հատկացվող առանձնահատուկ դերի մասին է խոսում հետևյալ փաստը։ Ինչպես հայտնի է, XVII դարի սկզբներին Եվրոպայում լուրեր էին տարածվում նախապատրաստվող խաչակրաց արշավանքների մասին դեպի Արևելք[7], և այդ արշավանքների նախանձախնդիր և ջատագով հայր Ժոզեֆը կամ «գորշ կարդինալը», որը չափազանց մեծ ազդեցություն ուներ Լուվրում, հույս էր հայտնում, որ հնարավոր կլինի այդ ծրագրերում օգտագործել քրիստոնյա ժողովուրդների սպասվելիք ապստամբությունները և հենվել հայ միարարների աջակցության վրա[8]։

XVII դարի սկզբներին Նախիջևանի հայ կաթոլիկ համայնքը բավականին մարդաշատ էր և ուներ տասը գործող եկեղեցի[9]։ Պետրոս Պետիկը, որը դի-

---

[4] Մ. Օրմանյան. Ազգապատում. մասն Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 1714։ После Марко Поло. Путешествия западных чужеземцев в страну Трех Индий. Пер. с латин. и старонтал. яз., введ. и примеч. Я. М. Света. М., 1968, с. 98.

[5] Տե՛ս Թուղթ Յոհաննէս վարդապետին Քոնեցւոյ առ միարանեալ եղբարսն հայոց.— Կղեմես Գալանոս. Միաբանութիւն հայոց սբ. եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ. հ. Ա, Հռոմ, 1650, էջ 514—522։ Գրիգոր Վ. Պետրովիչ. Միաբանող եղբայրները և հայ եկեղեցին (1330—1360). Վիեննա, 1971։

[6] Ղ. Ալիշան. Միսական. Վենետիկ, 1893, էջ 388։

[7] Հ. Անասյան. XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում. Երևան, 1961, էջ 94։

[8] G. de Vaumas. L'eveil missionnaire de la France au XVIIe siecle. Paris, 1959, p. 92.

[9] Histoire de l'eglise Grecque et de l'eglise Arménienne. Par Mr. le Chevalier Ricaut. Amsterdam, 1710, p. 420; J. B. Tavernier. Les six voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes. T. 1, Paris, 1692, p. 45.

վանագիտական հանձնարարությամբ Իրան էր ուղարկվել ֆրանսիական թագավորի ու վենետիկի դոժի կողմից, վկայում է, որ Նախիջևանի Ապաբաներ գյուղում կաթոլիկ տների թիվը հասնում է 300-ի[10]։ Իսկ Նախիջևանի ունիթորների արքեպիսկոպոս Ազարիա Ֆրիտոնը Հռոմ ներկայացնելով իր հաշվետվությունը, նշում է, որ իր թեմում հաշվվում է 19 հազար մարդ[11]։ Այդ ողջ թեմը իրեն ենթակա բազմաթիվ գյուղերով (Քոնա, Ապաբաներ, Սալթաղ, Ապրակունիս, Խոշկաշեն, Ջահուկ, Շահապոնս և այլն) ոչ միայն անջրպետված էր մայր եկեղեցուց՝ էջմիածնից, այլև ամբողջապես գտնվում էր Հռոմի տնօրինության ներքո և եպիսկոպոսները նշանակվում էին պապի կողմից։

Նախիջևանի հայ կաթոլիկները մշտապես գտնվում էին Հռոմի և եվրոպական միապետների ուշադրության կենտրոնում։ Այսպես, պորտուգալական միսիոներ Անտոնիո դե Գուվեայի վկայությամբ, շահ Աբբաս I-ի կողմից կազմակերպված հայերի բռնագաղթի ժամանակ միսիոներների և նրանց թիկունքում կանգնած եվրոպական միապետների ազդու միջամտության շնորհիվ կաթոլիկ հայերը ազատվեցին բռնի տեղահանությունից և նրանց թույլատրվեց մնալ հարազատ օջախներում[12]։ Այդ առթիվ Նախիջևանի ունիթորներից Ավգուստինոս Բաջեցին վկայում է, որ պարսիկ բանակում կար ֆրանսիական դեսպան, որը և ըստ երևույթին միջնորդել էր շահի առջև[13]։

Նախիջևանի հայ կաթոլիկներին հովանավորողներից ամենաաչքի ընկնողը Ֆրանսիայի Լյուդովիկոս XIV թագավորն էր, որը ակնկալում էր հնարավորություն ստեղծել միջամտելու և ճնշում գործադրելու շահերի վրա՝ զիջումներ, արտոնություններ, առևտրական մենաշնորհներ կորզելու համար։ Միաժամանակ, հայ ունիթորներին տրամադրելով տարբեր իրավունքներ և առանձնաշնորհումներ, ձգտում էր գործնական կյանքում ցուցադրել կաթոլիկություն ընդունելու առավելությունները, որի վերջնական նպատակն էր ողջ հայության դավանափոխության իրականացումը։ Այսպես, Լյուդովիկոս XIV-ը իր 1674 թ. փետրվարի 7-ի նամակով պահանջում էր շահից, որ ունիթորներն ազատվեն «իմամ Ջաֆարի» օրենքին ենթարկվելու պարտավորությունից[14], ըստ որի մահմեդականություն ընդունած քրիստոնյային էր անցնում իր ազգականների ունեցվածքը[15]։ Իրանի շահերին ուղղված բազմաթիվ այլ նամակներում, «Արև-արքան» միջամտում էր հօգուտ Նախիջևանի հայ լատինադավանների, խնդրելով թեթևացնել հարկերը, արտոնություններ շնորհել նրանց, հնարավորություն ընձեռել միարարների ազատ առևտրի համար, գերապատվություն տալ նրանց՝ ի տարբերություն մյուս քրիստոնյաների[16]։

Նախիջևանի ունիթորներին հովանավորում էին, բնականաբար, նաև Հռոմի պապերը[17]։ 1669 թ. Կղեմես IX պապի, Ֆրանսիայի Լյուդովիկոս XIV թագավորի, Տոսկանայի մեծ դուքսի և վենետիկյան սենատի հատուկ հանձնարարականներով Սպահան է ուղարկվում Նախիջևանի արքեպիսկոպոս Մատթեոս Հովհաննիսենցը՝ իրեն ենթակա միարարների օգտին արտոնություն-

---

[10] Bedros Bedik. Cehil Sutun. Viennae, 1678 p. 379.

[11] Գ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 387։

[12] Antholne de Gouvea. Relation des grandes guerres et victoire obtenues par le roy de Perse Chah Abbas contre les empereurs de Turquie Mahomet et Achmet son fils... Rouen, 1646. p. 146. Ռ. Կյուլպենկյան. Հայ-պորտուգալական հարաբերություններ. Երևան, 1986, էջ 212—213։

[13] Տե՛ս Ք. Պատկանյան. Նշխարք մատենագիտության հայոց. Պետերբուրգ, 1884, էջ 6։

[14] Raphael du Mans. Estat de la Perse en 1660. Publ. par Ch. Schefer.. Paris, 1890, appendice, p. 288—289.

[15] Տե՛ս Մ. Կարապետյան. «Իմամ Ջաֆարի» օրենքը և արևելահայերը (XVII—XVIII դարեր).—«Պատմա-բանասիրական հանդես», 1988, № 1, էջ 219—221։

[16] Raphael du Mans. Op. cit., p. 321—322, 289, 341.

[17] A Chronicle of the Carmelites in Persia. London. 1939, vol. I, p. 318, 417, 418

ներ հայցելու[18]։ Այդ բանակցությունների շնորհիվ կրկին վերահաստատվեցին Նախիջևանի հայ կաթոլիկների հին արտոնությունները։ Այսինքն հայ կաթոլիկ համայնքները «խաս» հայտարարվեցին, ճանաչվեցին «ենթակա հատկապես և անմիջապես շահին, ազատ մասնավոր որևէ իշխանի իրավասությունից»։ Դա նշանակում էր, որ կաթոլիկ համայնքներն այսուհետև գտնվելու էին շահի անձնական խնամակալության ու հովանավորության ներքո և անմիջականորեն նրան էլ մուծելու էին հարկեր և տուրքեր կամ ձեռք էին բերելու հարկային «իմունիտետի» իրավունք[19]։ Այդ իրավունքները Նախիջևանի հայ միարարները ձեռք էին բերել դեռևս շահ Աբբաս I-ի օրոք, սակայն տեղական պարսկական կառավարիչները ոչ միայն մշտապես շրջանցում էին շահական այդ առանձնաշնորհումը, այլև պարբերաբար ավելացնում էին հարկերը, խստացնում վերաբերմունքը միարարների նկատմամբ, պետական գանձարան գնացող հարկերի մի մասը անձնապես շորթելու միտումով։ Կաթոլիկ համայնքների կացության խիստ վատթարացման մասին են վկայում ղոմինիկյաններ Չիտադինիի և Օգոստինոս Բաջենցի կողմից կազմված և «Հավատի տարածման Ս. ժողովին» հասցեագրված տեղեկագրերը[20]։

Նման պայմաններում ակներև է, որ հայ ունիթորները ընկնելու էին ծանր պարտքերի մեջ, որոնք մարելու համար վերստին նրանց օգնության էին գալիս Եվրոպայի հովանավորողները։ Լյուդովիկոս XIV-ի դեսպանորդ Ֆրանսուա Պիքեն, Ապարաներում գտնվելիս, ունիթորներին տրամադրեց 3 հազար լիվր, իսկ նույն արքայի մեկ այլ դեսպան՝ հիսուսյան Բովուայեն, 1692 թ. ձեռք բերեց նրանց պարտքերի վճարումը հետաձգելու իրավունք։ Սակայն որոշ ժամանակ անց Ապարաներ ժամանեց Թավրիզի խանի որդին իր զորախմբերով և պահանջեց անհապաղ վճարել պարտքերը։ Եվ միայն հանրահայտ հիսուսյան Վիլոթի միջամտությունը և բնակչության ըմբոստությունը հայ ունիթորների այդ համայնքը փրկեց սնանկացումից[21]։

Ունիթորներին բազմիցս օգնության են հասել նաև կարմելյան միաբանության անդամները, որոնք կարողացան համոզել շահին՝ այլ վայր տեղափոխել իրենց դավանակիցներին անգթաբար կեղեքող Թավրիզի նահանգի կառավարիչներից մեկին, ինչպես նաև՝ մասնակիորեն իջեցնել տուրքերի չափը[22]։

Բացի այդ, Իսպանիայի թագավոր Փիլիպոս IV-ը թույլատրեց Նախիջևանի հայ միարարներին դրամ հայթայթել Ամերիկայում։ Նման արտոնություն նրանք ստացան նաև Հնդկաստանում[23]։ Հույժ հետաքրքրական է այն փաստը, որ ձեռք բերված միջոցների մի մասը ներդրվում էր վենետիկյան, հռոմեական բանկերում, որոնք բարձր տոկոսներ էին վճարում միարարներին[24]։

Չնայած եվրոպական կաթոլիկադավան տերությունների և Հռոմի սեռռուն ուշադրությանն ու էական օժանդակությանը Նախիջևանի գավառի հայ միարարներին, XVII դարի վերջերից նկատելի դարձավ կաթոլիկական համայնքների մոտալուտ փլուզումը։ Ծանր հարկերն ու պարսկական իշխանությունների ճնշումը և այլ գործոններ հանգեցրեցին բազմաթիվ հայ լատինադավանների կրոնափոխությանը և մահմեդականություն ընդունելուն։ Ղևոնդ Ալիշանը իր «Սիսական» աշխատությունում բերում է թվեր, որոնք վկայում

---

18 Ա. Հովհաննիսյան. Նոր նյութեր հայ-ունիթորական պատմագրությունից.— «Արարատ», 1915, էջ 64—69։

19 Bedros Bedik. Op. cit., 385.

20 Ռ. Կյուլպենկյան. նշվ. աշխ., էջ 213։

21 Francois Tournebize. Les freres-uniteurs ou dominicains armeniens.— „Revue de l'Orient Chretien", 22e volume, Paris, 1920—1921, p. 270.

22 Ռ. Կյուլպենկյան. նշվ. աշխ. էջ 214։

23 Նույն տեղում, էջ 257։ Կղեմես Գալանոս. նշվ. աշխ. հ. Ա, էջ 525։

24 Fr. Tournebize. Op. cit., p. 258—269.

են հայ կաթոլիկ բնակչության շարունակական նվազման մասին[25]։ Իսկ Ղազար կաթողիկոս Ջահկեցին գրում է. «Նմանապէս և յերկրին Նախիջևանայ Ախթարմայից գիւղօրայքն բազումք դարձան ի կրօնս պարսից, որպէս Սալիթաղ, Քոնայ..., և Կեծուկ, սոքա ամենեքեան, իսկ Ապրակունիս, և Շահբունիս, և Խոշկաշէն և Ապարաներ, որ է եպիսկոպոսարան իւրեանց, սոցա մեծ մասն...»[26], Կաթոլիկություն ընդունած հայ բնակչությունը, կտրված լինելով իր եկեղեցուց, որի դերը անգնահատելի էր հայապահպանման գործում, երկպառակություններ սերմանելով ու տրոհելով ժողովրդի միասնությունը, հեռանալով իր ազգային մշակույթից, ավելի հեշտությամբ էր զոհ դառնում մահմեդական իշխանությունների համաձուլման քաղաքականությանը։ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը նշում է, որ «ունիթոռների գործողությանց համար գրել ու կրկնելն ավելորդ է, ըստ որում հայոց եկեղեցվո ախոյանք շատ են գրել ե Երնջակա գավառի թուրքացած գյուղերի թուրք ժողովուրդը և եկեղեցիքը և վանքերը բավական վկա են և նախատինք ունիթոռանց»[27]։

Այսպիսով, XVIII դարի կեսերին ծանր հարկապահանջության, օտար տիրապետողների ասպատակությունների և այլ պատճառներով Նախիջևանի լաինադավան բնակչության մի զգալի մասը մահմեդականացավ, մյուս մասը վերադարձավ իր նախկին հավատին կամ տարագրվեց։ Գ. Ոսկյանը վկայակոչում է «Հավատասփյուռ ժողովին» ներկայացված մի տեղեկագիր, որի համաձայն Քոնա և Ապարաներ վանքերից «Կուլի-խանի՝ (Նադիր-շահ) (1736—47) վերջին գազանային պատերազմներեն Հայ Եղբարք քշվեցան»[28]։ Ղ. Ալիշանի տվյալներով այդ իրադարձություններից հետո Նախիջևան այցելած իտալացի միսիոներները հայտնաբերեցին ընդամենը 60 կամ 70 իրենց հայ դավանակիցների[29]։

Խոսելով Նախիջևանի հայ բնակչության համար կաթոլիկ միսիոներության խիստ բացասական հետևանքների մասին, միևնույն ժամանակ պետք է նշել նրա խաղացած առաջադիմական դերը, հատկապես մշակույթի բնագավառում։ Կաթոլիկադավանների մշակութային գործունեության և նրանց թողած հարուստ ժառանգության պատշաճ գնահատականը տվել է ականավոր պատմաբան, ակադեմիկոս Լ. Խաչիկյանը, որը հանգամանորեն անդրադարձել է այդ հարցին Արտազի հայկական իշխանության և Ծործորի դպրոցի պատմության լուսաբանման առնչությամբ[30]։

Հաստատվելով Արևելյան Հայաստանում XIV դարում, կաթոլիկ միսիոներները և նրանց սանները լայնահուն թարգմանչական գործունեություն ծավալեցին, թարգմանաբար ներկայացնելով հայ բնակչությանը Եվրոպայի գիտական, դավանաբանական, փիլիսոփայական մտքի լավագույն նմուշները։ Ապարանքում 1632 թ. բացվել էր կաթոլիկական մի դպրոց, որը որոշակի դեր խաղաց հայերին քաղաքակիրթ Եվրոպայի նվաճումներին հաղորդակից դարձնելու գործում։ Այդտեղ դասավանդում էին Իտալիայից ժամանած հմուտ ուսուցիչներ, սակայն պետք է նշել, որ այս վարժատան հաջող գործունեությանը խոչընդոտում էին ծանր սոցիալ-տնտեսական պայմանները և աշակերտների ընդգրկումը գյուղատնտեսական աշխատանքներում[31]։

25 Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 387։

26 Ղազար Ջահկեցի. Գիրք աստուածաբանական, որ կոչի դրախտ ցանկալի. Կ. Պոլիս, ՌԴՁԴ (1735), էջ 334։

27 Մ. Սմբատյան. Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակա և ջրշակայից նորա. Տփխիս, 1904, էջ 3։ Նախիջևանի ունիթորների մահմեդականացման մասին տե՛ս նաև Գ. Զարպհանալյան. Մատենադարան հայկական թարգմանության նախնյաց (դար Դ—ԺԳ). Վենետիկ, 1889, էջ 614—615։

28 Գ. Ոսկյան. Համառոտ ակնարկ մը քարոզող և միաբանող եղբարց պատմության Հայաստանի մեջ.—«Բազմավեպ», հունվար, 1922, էջ 21։

29 Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 407։

30 Լ. Խաչիկյան. Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը.—«Բանբեր Մատենադարանի», Երևան, 1973, № 11, էջ 168—209։

31 Կ. Ամատունի. Ոսկան վրդ. Երևանցի և իր ժամանակը. Վենետիկ, 1975, էջ 38։

Վերջապես արևելահայության, ինչպես նաև արևմտահայության շրջանում կաթոլիկ քարոզչության հունձքի առատության պատճառներից մեկն էր հայ ժողովրդի աճող հետաքրքրությունը դեպի արևմտյան մշակույթն ու լուսավորությունը։ Հայ մտավորականները հրապուրվում էին կաթոլիկ միսիոներների ունեցած անհամեմատ հարուստ գիտելիքներով՝ չհասկանալով նրանց քարոզների սքողված ու հեռուն գնացող նպատակները[32]։

Ձգտելով իրագործել հայոց եկեղեցին «դարձի բերելու» ծրագիրը, կաթոլիկ միսիոներները բնավ չէին ցանկանում Արևելյան Հայաստանում սահմանափակվել Նախիջևանի պես կարևոր կաթոլիկական կենտրոնի ձեռք բերմամբ։ Բացի այդ, կաթոլիկական շրջանների համար բավականին մեծ դժվարություն էր ներկայացնում Նախիջևանը որպես հռոմեական եկեղեցու հետագա առաջխաղացման հենակետ ծառայեցնելու խնդիրը, քանի որ այնտեղ տիրապետող գոմինիկյան կրոնավորները հաճախ թշնամանքով էին վերաբերվում Նախիջևան ժամանող այլ միաբանությունների միսիոներներին[33]։ Ուստի միսիոներները ստիպված եղան իրենց ուշադրությունը սևեռել Արարատյան երկրի կենտրոն Երևան քաղաքի վրա, որը միշտ էլ բաղձալի վայր էր հանդիսանում Հռոմի և միսիոներության ղեկավար մարմին՝ «Հավատասփյուռ ժողովի» քարոզչական նպատակների համար։ Երևանը հրապուրում էր կաթոլիկ քարոզիչներին նաև այն պատճառով, որ այն գտնվում էր հայոց եկեղեցու ամենաազդեցիկ կենտրոնի՝ Էջմիածնի անմիջական հարևանությամբ։ Պատահական չէ, որ քարոզիչ Ֆլեորիոն և նրա եղբայրակիցները Երևանում հաստատվելու ձգտումը բացատրում էին հատկապես կաթողիկոսանիստ Էջմիածինը Հռոմին հպատակեցնելու և այդ ճանապարհով հայ ժողովրդի կաթոլիկացումը դյուրին դարձնելու հանգամանքով[34]։

Երևանում հաստատվելու առաջին փորձը կատարեցին կապուչինյան միաբանության քարոզիչները։ 1667 թ. Թավրիզից Երևան փոխադրվեց հայր Դարրիել դե Շինոնը, որին հաջողվեց այնտեղ հիմնավորվել տեղի լատինամետ, չափազանց ազդեցիկ հայերի աջակցությամբ։ Դրանցից մեկն էր հայտնի վաճառական Ազարիա Ավագը (Ավագյան), որը կրթություն էր ստացել Հռոմի ուրբանյան դպրոցում։ Նրա օժանդակությամբ Շինոնը Երևանում կառուցեց մի եկեղեցի և ստացավ նաև շահի ռաղամը (հրովարտակը) դպրոց բացելու վերաբերյալ։ Սակայն այդ փորձը ձախողման մատնվեց։ Հայ հոգևորականները ընդդիմացան կապուչինյան այդ միսիոներների ձեռնարկումներին և, ինչպես գրում է Ղ. Ալիշանը, «ի ձեռն խանին ետուն փակել զայն (եկեղեցին— Ա. Բ.), և զՇինոն խոշտանգեցին, որ և յետ սակավ աւուրց մեռաւ (1668)»[35]։ Վերը նշված Ազարիա Ավագը ֆինանսական օգնություն էր ցույց տալիս նաև Երևանի ունիթորներին՝ եկեղեցի կառուցելու համար, սակայն այդ փորձը ևս դրական արդյունք չտվեց։ Այդ կապակցությամբ 1669—1672 թթ. ընթացքում Հռոմը բազմիցս բողոքներ էր հղում շահ Սուլեյմանին[36]։

Պետք է նշել, որ ի սկզբանե Երևանում հաստատվելու փորձեր կատարելու ընթացքում կաթոլիկ միսիոներները հանդիպեցին հայոց եկեղեցու կողմից առաջնորդվող հայ բնակչության հուժկու դիմադրությանը, որի նպատակն էր վճռականորեն կասեցնել լատինականության ներթափանցումը Երևան։ Համառ պայքար մղելով Հռոմի և եվրոպական տերությունների գործակալների դեմ,

---

32 Հ. Միրզոյան. XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն. Երևան, 1983, էջ 55։

33 G. de Vaumas. Op. cit., p. 359.

34 Th. Ch. Fleuriau. Estat présent de l'Arménie, tant pour le temporel que pour le spirituel. Avec une description du pays et des moeurs de ceux qui l'habitent par le Pere Th. Ch. Fleuriau, Paris, 1694, p. 219; Ph. Avril. Voyage en diverse etats d'Europe et d'Asie, Paris, 1692, p. 68.

35 Ղ. Ալիշան. Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 315։

36 A Chronicle..., vol. I, p. 402—406.

հայ բնակչությունը երբեմն դիմում էր ծայրահեղ քայլերի, ընդհուպ մինչև չափից դուրս «եռանդուն» միսիոներներին ֆիզիկապես ոչնչացնելը։

Հայսօր իր լուծումը չի ստացել կարմելյան միաբանության միսիոներների Երևանում հաստատվելու պատմության հետ կապված հարցը։ Հոլանդացի Յան Ստրույսը, որը այցելել էր Երևան 1670 թ., իր ուղեգրության մեջ նշում է, որ այդ քաղաքում գործում է կարմելյաններին պատկանող մի եկեղեցի[37]։ Եթե ընդունենք, որ կարմելյանները իրոք հաստատվել էին նաև Երևանում, ապա տարօրինակ է թվում այն փաստը, որ «Կարմելյանների տարեգրությունը», որը համապարփակ ձևով ներկայացնում է այդ միաբանության միսիոներների գործունեությունը Իրանում և նույնպես մեծարժեք նյութեր է պարունակում Արևելյան Հայաստանի քարոզչական կենտրոնների մասին, լռությամբ շրջանցում է կարմելյանների երևանյան միսիայի պատմությունը։ Հավանաբար, նրանք Երևանում գտնվել են միայն կարճատև ժամկետով և ինչ-ինչ պատճառներով ի վիճակի չեն եղել հիմնավորվել այնտեղ։

Սակայն մենք չենք կարող անվերապահորեն ընդունել Ստրույսի հաղորդած տեղեկության հավաստիությունը, նաև այն պատճառով, որ ֆրանսիացի բուսարան Տուրնեֆորը հերքում է նրա մեկ այլ պնդումը այն մասին, թե Արարատ լեռան ստորոտներում բնակվում էին կաթոլիկ անապատականներ և կային եկեղեցիներ[38]։

XVII դարի 80-ական թթ. Երևանում հաստատվելու եռանդուն փորձեր էին կատարում նաև պապականության առաջամարտիկներ հանդիսացող հիսուսյանները, որոնք հանդիսանում էին նաև Արևելքում ֆրանսիական բացարձակապետության գաղութային քաղաքականության ակտիվ իրագործողներ։ Նրանք օգտվում էին Լյուդովիկոս XIV-ի, ինչպես նաև Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկու կատարյալ հովանավորությունից։ Միայն Ֆրանսիայի ազդեցիկ միջամտության շնորհիվ հնարավոր դարձավ հիսուսյանների հիմնավորումը Երևանում։ Լյուդովիկոս XIV-ի հանձնարարական նամակները և առատ նվերները վերջին հաշվով տվեցին իրենց արդյունքը[39]։ 1684 թ. հիսուսյաններ Լոնժոն և Պոթիեն ժամանեցին Երևան, նախօրոք ստանալով շահի հավանությունը և թույլատրագիրը՝ քարոզել քրիստոնյա հպատակների շրջանում։ Հիսուսյան այդ նոր միսիայի բացման և, ընդհանրապես, քարոզիչների և իրանական իշխանությունների միջև ծագող բոլոր տեսակի հարցերի կարգավորման գործում մեծ դեր էր խաղում Լյուդովիկոս XIV-ի դեսպանը շահական արքունիքում՝ Ֆրանսուա Պիքեն, որը նույնպես պատկանում էր քարոզիչ եղբայրների կարգին[40]։

«Հոյոլայի հետևորդների» հայտնվելը Երևանում անմիջապես հարուցեց կաթողիկոս Եղիազարի (1682—1691) հակազդեցությունը, որը և բանադրանքի սպառնալիքի ներքո արգելեց շփվել նրանց հետ։ Որոշ ժամանակ անց հայր Լոնժոն հանկարծամահ եղավ, և նրա վաղահաս վախճանը տեղիք տվեց համառ խոսակցությունների միսիոներների շրջանում՝ դրա ոչ բնական լինելու մասին[41]։ Նրա գործի շարունակողը հանդիսացավ Ռուն, որը 1685 թ. ժամանելով Էջմիածին, շափազանց մտերիմ հարաբերություններ հաստատեց կաթողիկոսի հետ։ Կաթոլիկության այդպիսի կատաղի թշնամու՝ կաթողիկոս Եղիազարի վերաբերմունքի կտրուկ փոփոխությունը միսիոներների նկատ-

---

[37] John Struys. The Voyages and Travels of John Struys through Italy, Greece, Muscovy, Tartary, Media, Persia, East-India, Japan, and other countries in Europe, Africa and Asia. Done out of Dutch, by John Morrison. London, 1684, p. 213.

[38] Pitton de Tournefort. Relation d'un voyage du Levant, fait par ordre du roy. T. 2, Lyon, 1717, p. 357.

[39] Th. Ch. Fleuriau. Op. cit., p. 227—228.

[40] Տե՛ս George Goyau. Un precurseur Francois Piquet, consul de Louis XIV en Alep, et eveque de Babylone. Paris, 1942.

[41] Nouveaux memoires des missions de la Compagnie de Jesus dans le Levant. T. 3, Paris, 1723, p. 240—243.

մամբ հիսուսյան Ֆլեորիոն բացատրում է հետևյալ կերպ. երբ Եղիազարը լրջորեն հիվանդացել էր, նույն միաբանության մի քարոզիչ «ապաքինեց նրա մարմինն ու ոգին», և երախտապարտ կաթողիկոսը արտոնագիր շնորհեց, թույլատրելով բոլոր հիսուսյաններին ազատ քարոզել և պատարագ մատուցել հայկական եկեղեցիներում[42]։ Հայոց հոգևոր առաջնորդը դիմում էր այդպիսի քայլերի, անկասկած, որոշակի ակնկալիքներ ունենալով, կապված հիսուսյաններին հովանավորող Հռոմի և նրա «ավագ դստեր» Ֆրանսիայի հետ՝ ենթադրելով, որ ազգային-ազատագրական պայքարում այդ տերությունները սատար կկանգնեն հայ ժողովրդին։ Օգտագործելով կաթողիկոսի այդ սպասելիքները, հիսուսյան Դյուպուին ամեն կերպ հորդորում էր նրան պաշտոնապես կաթոլիկություն ընդունելու մի փաստաթուղթ ստորագրել։ Սակայն նրա ճիգերը ապարդյուն անցան։ Եվ դա հակառակ այն բանի, որ հայոց կաթողիկոսը մեծարանքի առարկա էր դարձրել հիսուսյաններից ստացած և Էջմիածնի տաճարի դռան ճակատին զետեղած Լյուդովիկոս XIV-ի պատկերը[43]։ Հիսուսյանների բոլոր ջանքերը և համառ փորձերը Էջմիածինը «սուրբ Պետրոսի դահին» հպատակեցնելու ուղղությամբ կատարյալ ձախողման մատնվեցին։

XVII դարի վերջին տասնամյակում ակտիվություն են սկսում դրսևորել Լեհաստանի հիսուսյանները, համալրելով Երևանի միսիոներական կենտրոնը։ Մասնավորապես, արևելահայության կաթոլիկացման գործին ձեռնամուխ եղավ լեհահայ Սիմոն Պետրովիչը, որը Հռոմում հոգևոր աստիճան ստանալուց հետո մեկնել էր Իրան որպես Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկու դեսպան։ Երևանի ճանապարհին նա հիվանդացավ և մահացավ, բայց նրա ձեռնարկած գործը ունեցավ իր շարունակողները։ Հետևելով Պետրովիչի օրինակին, Լեհաստանից Երևան ժամանեցին հիսուսյան միաբանության նոր անդամներ, որոնք եռանդուն դավանափոխական գործունեություն ծավալեցին հայ բնակչության շրջանում[44], օգտագործելով Լեհաստանում ձեռք բերած նմանօրինակ հարուստ փորձը։ Սակայն եթե լեհահայ գաղթօջախը հաջողվեց համարյա ամբողջապես կաթոլիկացնել և ձուլել, ապա Արևելյան Հայաստանում միսիոներների հունձքը ուղղակի չնչին էր, բացառությամբ Նախիջևանի գավառի։ Դրա պատճառներից է այն, որ ի տարբերություն Լեհաստանի կառավարիչների հովանավորությամբ հայերի նկատմամբ տարվող բռնի դավանափոխական քաղաքականության, իրանական իշխանությունները, շահագրգռված չլինելով հայ բնակչության կաթոլիկացման մեջ, հաճախ հալածանքի էին ենթարկում միսիոներներին, կասեցնելով նրանց չափից ավելի եռանդագին գործունեությունը։ Բացի այդ, եթե լեհահայությունը սոսկ մի գաղթօջախ էր, շրջափակված կաթոլիկական միջավայրով և կտրված մայր-հայրենիքից ու եկեղեցական կենտրոններից, ապա բուն Հայաստանում հայ բնակչությունը կազմում էր ստվար մի զանգված, հայրենի կենարար հողում միաձուլված իր բազմադարյան հարուստ մշակույթով, ավանդույթներով, եկեղեցիով և տոգորված ազգային փրկության և անկախության գաղափարներով։

Պետք է նշել, որ լատինականության սերմանիչները, քարոզչությամբ չհասնելով շոշափելի արդյունքների, փորձեցին հօգուտ իրենց ծառայեցնել հայ առաքելական եկեղեցում տիրող խորը պառակտումն ու ճգնաժամը։ Օգտագործելով հայադավան եկեղեցականների ներքին երկպառակությունները, միսիոներներն աջակցում էին պայքարող կողմերից մերթ մեկին, մերթ մյուսին՝ հուսալով հաղթողի միջոցով գլուխ բերել իրենց մտահղացումը։ Այսպես, շահական հրովարտակով 1696 թ. հակակաթոլիկական հայացքներ ունեցող հայ հոգևորականներից մեկը՝ Ստեփանոս Ջուղայեցին, հռչակվեց Էջմիածնի կաթողիկոս՝ Նահապետ Եդեսացի կաթողիկոսի (1691—1705) փոխա-

---

[42] Th. Ch. Fleuriau. Op. cit., p. 118.

[43] Lettres édifiantes et curieuses, écrites des missions étrangères. t. 3, Paris, 1780. p. 436; Jacques Villotte. Voyage d'un missionaire de la Compagnie de Jesus en Turquie, en Perse, en Arménie, en Arabie, et en Barbarie. Paris, 1730, p. 141.

[44] Lettres édifiantes et curieuses..., t. 3, p. 448—449.

րևն, որը գահազուրկ եղավ։ Հիսուսյաններն անմիջապես միջամտեցին ղեպքերին, նեցուկ հանդիսանալով Նահապետին, որը և վերստին ստանձնեց իր գահը[45]։ Իսկ Ստեփանոս կաթողիկոսը՝ «Ֆրանկների ոխերիմ թշնամին» մատնվեց խանի ձեռքը, բանտարկվեց, ծեծվեց և 1698 թ. բանտում էլ մահացավ[46]։

Թեև միսիոներական կենտրոնների էին վերածվել միայն Նախիջևանը և Երևանը, սակայն ունիթորությունը որպես կրոնական և քաղաքական երևույթ սփռվել էր ողջ Արևելյան Հայաստանով մեկ, դարձնելով այն գժտություններ, կրոնական հակամարտությունների մի թատերաբեմ։

Ի դեպ, որոշ թվով լատինադավան հայեր կային նաև Աղվանից կաթողիկոսության մեջ մտնող Գանձակում, Շամախիում, Շիրվանում, Բաքվում, Դերբենտում, Նուխիում, Խաչենի երկրում և «բոլոր տունն Աղվանից», այսինքն Ղարաբաղի մելիքություններում։ Եվ Հռոմը շոշափում էր նաև Աղվանքի կաթողիկոսներին իրեն հպատակեցնելու հնարավորությունները, որը իր արտացոլումն է գտել կողմերի միջև թղթակցության մեջ[47]։

XVII դարի երկրորդ կեսից սկսած, խորամուխ լինելով միսիոներության հետապնդած իրական նպատակների մեջ և համոզվելով, որ կաթոլիկացումը ոչ միայն չի կարող հայ ժողովրդին ազատել օտարի լծից, այլև մասամբ ավելի է ուժեղացնում այդ լուծը, որ կաթոլիկությունը տեղիք է տալիս հայ կյանքում կրոնական ալեկոծություններ, որ իրականում Հռոմը մտահոգված չէ հայ ժողովրդի քաղաքական ազատության խնդրով, որ կաթոլիկ միսիոներներն աշխատում են լատինացնել ոչ միայն հայերի հոգին, այլև լեզուն, որ կաթոլիկ քարոզչությունը խաթարում է հայերի միասնությունը, հայ ժողովրդի տարբեր խավերը պայքարի ելան Հռոմի և եվրոպական տերությունների սպասավորների՝ կաթոլիկ միսիոներների դեմ, հանդես գալով որպես իրենց հոգևոր ու մշակութային արժեքների, ազգային, կրոնական ու կենցաղային ավանդույթների պահպանման ջատագով։

Հայ ժողովրդի հակակաթոլիկական պայքարը թեև արտաքուստ կրում էր կրոնական գունավորում, սակայն իր էությամբ դա ուներ քաղաքական խորք։ Առհասարակ, հայ ժողովրդի դարավոր պայքարը կաթոլիկության դեմ չի կարելի դիտել լոկ որպես ընդդիմություն հայերին կաթոլիկացնելու փորձերին։ Այդ պայքարը հանդիսանում էր դեպի Արևելքի երկրներ եվրոպական տերությունների քաղաքական նվաճողականության դեմ համընդհանուր պայքարի բաղկացուցիչ մասը։

Արևելյան Հայաստանի հայ բնակչությունը կաթոլիկության դեմ իր պայքարը սկսել էր դեռևս XIV դարից։ Այդ պայքարը ստացել էր համառ բնույթ և մղվել բազմապիսի ձևերով ու մեթոդներով։ Նախիջևանում ունիթորության հանդես գալուց հետո Մաղաքիա վարդապետը հիմնադրեց Ս. Կարապետի վանքը (Ապրակունիս գյուղի մոտ), որը դարձավ հակակաթոլիկական մաքառման կենտրոն[48]։ Այդ պայքարում աչքի ընկան Գլաձորի համալսարանի ուսումնականները[49], որոնք բանավիճական բնույթի բազմաթիվ գրքերով տեսության բնագավառում պատնեշեցին կաթոլիկության հարձակման ճանապարհը։ Կասկածից վեր է, որ այս շրջանում հռոմեականության դեմ ուղղված շարժումը պետք է դառնա առանձին ուսումնասիրության առարկա։

XVII դարում հակակաթոլիկական պայքարը ավելի սուր բնույթ ստացավ։ Այդ մասին են վկայում բազմաթիվ փաստեր։ Այսպես, Նախիջևանի հայ միաբարների առաջնորդ Մատթեոս Հովհաննիսենցը դիմում էր եվրոպական

---

[45] Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 233։ Lettres edifiantes et curieuses..., t. 3, p. 444—446.

[46] A Chronicle..., vol. 1, p. 482.

[47] Ստեփանոս Ռոշքա. Ժամանակագրութիւն կամ տարեկանք Եկեղեցականք. Հրատ. Հ. Ոսկյան. Վիեննա, 1964, էջ 186—188։

[48] Մ. Սմբատյան. Նշվ. աշխ., էջ 2։

[49] Տե՛ս Ա. Աբրահամյան. Գլաձորի համալսարանը. Երևան, 1983, էջ 31—37։

արքունիքներին՝ պաշտպանություն խնդրելով ոչ միայն «անօրեններից», այլև «հերձվածողներից»[50]։ Արևելահայությունը իր պայքարում օգտագործում էր նաև շահական իշխանություններին, քաջ գիտակցելով, որ վճռական պահերին իրանական կառավարիչները միշտ էլ հանդես կգան եվրոպական քաղաքականության գործակալներ կաթոլիկ միսիոներների դեմ։ Այսպես, օրինակ, երբ լատին քարոզիչները հափշտակեցին Հռիփսիմեի մասունքները, Էջմիածնի Դավիթ կաթողիկոսը և խոջա Նազարը հորդորեցին շահ Աբաս I-ին պատժել հանցավորներին[51]։ Հայտնի է, որ պալատական սպասավոր Ալիքումը նրա հրամանով Ապարաներում խոշտանգումների է ենթարկում ֆռանկ հայրերին և հետ ստանում մասունքները։ Մատենադարանի պարսկերեն վավերագրերի շարքում գտնվում է մի փաստաթուղթ՝ շահի 1610 թ. հրովարտակը, որտեղ նա կարգադրում է Երևանի բեկլարբեկ Ամիր-Գունա խանին տեղում հետաքննություն կատարել և մինչև վերջ հետապնդել այդ գործի բոլոր մեղսակիցներին[52]։

Հակակաթոլիկական պայքարը հատկապես սուր բնույթ ստացավ հիսուսյան քարոզիչների Երևան ներթափանցելուց հետո։ Անհրաժեշտ է նշել, որ հիսուսյանները ավելի հարձակողական և անհանդուրժողական վերաբերմունք էին ցուցաբերում հայերի հավատի նկատմամբ, քան մյուս միաբանությունները[53] և հայ բնակչությանը կաթոլիկացնելու նպատակին հասնելու համար անխտիր օգտագործում էին հնարավոր բոլոր միջոցները։ Այդ իսկ պատճառով պատահական չէ, որ հայերի ընդդիմությունը հիսուսյաններին կրում էր ավելի ուժգին և անհաշտ բնույթ։ Երևանում հաստատված շատ միսիոներներ մահացան կասկածելի հանգամանքներում։ Հայոց եկեղեցու հոգևոր առաջնորդները բանադրանքի էին ենթարկում, վտարում լատինամետ հայերին, արգելում էին հայ լուսավորչական դավանանքի հետևորդների ամուսնությունը ունիթորների հետ։ Հակակաթոլիկական պայքարը դուրս էր եկել նույնիսկ Հայաստանի սահմաններից։ Այսպես, 1662 թ. կաթոլիկ հայերից Առաքել Բոբիկը, առաջարկելով իր ծառայությունները Վենետիկի և Իրանի միջև դաշինք կնքելու համար, խնդրում էր, որ առաջարկը գաղտնի մնա, քանի որ Վենետիկում ապրող հայերը թշնամանքով են վերաբերվում կաթոլիկադավան ազգակիցներին[54]։ Պետք է նշել, որ կաթոլիկության դեմ պայքարում մեծ դեր է խաղացել նաև հայ առևտրական դասը, որը իր ձեռքում կենտրոնացնելով մեծ դրամական միջոցներ, կարողացել է հաջողությամբ դիմադրավել հռոմեական ճնշմանը և գործուն միջոցներով մաքառել նրա դեմ։

Դրա հետ մեկտեղ, հայոց կաթողիկոսները, նույնիսկ XVII դարի վերջի թեժ հակամարտությունների ժամանակ, երբեմն հանդուրժողական վերաբերմունք էին ցուցաբերում և սիրաշահում միսիոներներին, որովհետև քարոզիչների թիկունքում կանգնած Արևմուտքը նվաճված ու տրոհված Հայաստանի համար մնում էր մի հուսատու փարոս, որին էին ուղղված ժողովրդի ակնկալիքները, սակայն դրանք երբեք չիրականացան։

Որոշ զիջումների դիմելու տրամադրություններով տոգորված հոգևոր վեհապետների դեմ, որոնք բնավ լատինասեր չէին, հենց հայոց կրոնական միջավայրում հանդես էին գալիս ընդդիմադիր շարժումներ։ Նման շարժումներ (որը, սակայն, միակը չէր) Նահապետ կաթողիկոսի դեմ ուղղված Ստեփանոս Ջուղայեցու շարժումը և Կ. Պոլսի Եփրեմ պատրիարքի ելույթը[55]։ Այսպիսով, կաթոլիկության օգտին կատարվող յուրաքանչյուր, նույնիսկ չնչին

---

50 G. Berchet. La Republica di Venezia e la Persia. Torino, 1865, p. 232—233.

51 Առաքել Դավրիժեցի. Պատմութիւն. Վաղարշապատ, 1896, էջ 178—198։

52 Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, կազմ. Հ. Փափազյան. հ. II, Երևան, 1959, էջ 90—91։

53 Poullet. Nouvelles relations du Levant. Paris, 1668, vol. 2, p. 286—287.

54 G. Berchet. Op. cit., p. 230.

55 Մ. Մուրադյան. Պատմություն Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցվոյ. Երուսաղեմ, 1842, էջ 571—572։

մի քանի առաջ էր բերում բուռն հակազդեցություն հայ հոգեորականության, ինչպես նաև խոջայության և ժողովրդական լայն զանգվածների շրջանում։

Միսիոներների դեմ ուղղված պայքարի առաջատարները, անշուշտ, հայ ժողովրդական զանգվածներն էին։ Հենց նրանց անձնվեր պայքարը վերջին հաշվով ձախողեց եվրոպական տերությունների գաղութատիրական ծրագրերի իրագործումը և թույլ չտվեց կաթոլիկացնել արևելահայությանը։

ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ КАТОЛИЧЕСКИХ МИССИОНЕРОВ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В XVII ВЕКЕ

А. В. БАЙБУРТЯН

Резюме

В XVII в. Восточная Армения, наряду со странами Ближнего и Среднего Востока, стала объектом интенсивной деятельности католических миссионеров, явившихся предвестниками колониальной экспансии европейских держав. Миссионеры стремились подчинить армянскую апостольскую церковь власти Рима, и с этой точки зрения Восточная Армения, на территории которой находился наиболее влиятельный духовный центр армянского народа—Эчмиадзин, являлась особо желанной целью для латинских проповедников. Кроме того, в провинции Нахичеван Восточной Армении уже существовали с XIV в. многочисленные общины армян-униатов, пользовавшихся покровительством могущественных европейских монархов. Деятельность миссионеров различных монашеских орденов сопровождалась процессами латинизации армянского населения, его отрывом от национальной почвы, от вековых культурных традиций. В условиях тягчайшего гнета мусульманских правителей это нередко оборачивалось обращением в ислам части армян-католиков и, что самое опасное, разъединением жизненных сил народа. Вместе с тем, следует отметить, что католические миссионеры сыграли и некоторую положительную роль, особенно в области культуры.

Различные слои армянского народа, поднявшись на борьбу против служителей Рима и западных держав, сорвали их широкомасштабные колониальные планы в отношении Восточной Армении.